

ՀՏԴ 37

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ
Ղ. ԱԼԻՇԱՆԻ «ՇԻՐԱԿ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ
Մարդյան Գ. Ա.

Անին՝ Բագրատունյաց հարստության մայրաքաղաքը, առանց չափազանցության և՛ իր շեն օրերին, և՛ իր ավերակներով եղել ու մնում է քաղաքակիրթ մարդկության հետաքրքրության առարկան: Միջնադարի հայ պատմիչները, սկսած Ոսկեդարից, խոսել են Անիի մասին: Այդ պատմիչներից են Եղիշեն, Ղազար Փարպեցին, Ստեփանոս Ասողիկը, Արիստակես Լաստիվերցին, Սամվել Անեցին, Մատթեոս Ուռհայեցին, Մխիթար Այրիվանեցին, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ: Իրավամբ, Արիստակես Լաստիվերցին Անին անվանում է «տիերեգահոչակ քաղաք»: «Շիրակ» հատորում այդքան մեծ տեղ տալով Անի մայրաքաղաքի պատմությանը՝ Ալիշանը նպատակ ուներ հայրենասիրական լիցքերով տոգորել հայ ժողովրդի նոր սերնդին, որպեսզի նրանք մտածեին վերականգնել հայ պետականությունը և հետագա սերնդին պարզեն նորոգ Անին՝ որպես հայ ժողովրդի հարատևության երաշխիք: Այս առումով «Շիրակ» աշխատության մեջ Անիին վերաբերող պատվիրանները մշտապես արդիական են:

Բանալի բառեր. Ղևոնդ Ալիշան, «Շիրակ», Անի, Բագրատունիներ, մայրաքաղաք, ողբ, գեղարվեստական, ճանապարհորդ, ավերակներ, նոր Անի:

Անին՝ Բագրատունյաց հարստության մայրաքաղաքը, առանց չափազանցության և՛ իր շեն օրերին, և՛ իր ավերակներով եղել ու մնում է քաղաքակիրթ մարդկության հետաքրքրության առարկան: Միջնադարի հայ պատմիչները, սկսած Ոսկեդարից, խոսել են Անիի մասին: Այդ պատմիչներից են Եղիշեն, Ղազար Փարպեցին, Ստեփանոս Ասողիկը, Արիստակես Լաստիվերցին, Սամվել Անեցին, Մատթեոս Ուռհայեցին, Մխիթար Այրիվանեցին, Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին և

ուրիշներ: Իրավամբ, Արիստակես Լաստիվերցին Անին անվանում է «տիերեգահոչակ քաղաք» [4-98]:

XVIII դարից սկսած՝ արդեն ավերակ դարձած Անին դառնում է եվրոպացի ու ռուս ճանապարհորդների հետաքրքրության առարկան. նրանք հատուկ նպատակով գալիս են Անի՝ վերջինիս ճարտարապետությունն ուսումնասիրելու: Այսօր եվրոպական լեզուներով, այդ թվում՝ ռուսերենով, առկա է մեծածավալ գրականություն, որտեղ հայ Բագրատունիների մայրաքաղաքը նկարագրվում է որպես X–XI դարերի ճարտարապետական հրաշք:

Բավական է հիշել անգլիացի ճանապարհորդ սրբ Ռոբերտ Կեռ Պոռթերին, որը 1817 թվականին այցելել է Անի ու 1821 թվականին իր ճամփորդական ծավալուն գրքում, որը լույս է տեսել Լոնդոնում, հիացմունքով է խոսում Անիի ճարտարապետության մասին: Պոռթերի սովորածավալ հատորը նվիրված է Անգլիայի թագավոր Գևորգ (Ջորջ) Չորրորդին: Այս գիրքը խիստ արդիական է, որովհետև XIX դարասկզբին Հայաստանը գտնվում էր Թուրքիայի ու Պարսկաստանի գերիշխանության տակ, մինչդեռ եվրոպացիներն այն շարունակում էին ճանաչել որպես Հայաստան: Այսօր Թուրքիայի տարածքում գտնվող Անին ներկայացվում է որպես թուրքական մշակութային ժառանգություն: Ի պատասխան պատմական այդ նենգափոխման՝ անգլիացի ճանապարհորդը գրում է. «Մենք տեսանք Հայաստանի թագավորների պալատներից մեկը» [6-173]: Միաժամանակ ավելացնում է, թե ինքը երբևէ չի տեսել X–XI դարերի այնպիսի հոյակապ ճարտարապետություն, ինչը տեսել է Անիում, ու այդ դարի համար գուգահեռներ չկան ո՛չ արտասահմանում և ո՛չ Անգլիայի ամենահռչակավոր կաթողիկե եկեղեցիներում [6-173]:

Անիագիտության մեջ մեծագույն դեր է պատկանում Ֆրանսիացի հայագետ Մարի Ֆելիսիտե Բրոսսեին, որը 1860 – 1861 թթ. հրատարակեց «Անիի ավերակները» երկհատոր աշխատությունը [5]:

Անիի ամենամեծ գիտակը եղել է նշանավոր հայագետ Նիկողայոս Մառը, որը 1893 – 1917 թթ. զբաղվել է Անիի պեղումներով և ցարդ համարվում է թիվ մեկ անիագետը: Նրա դիտարկումներն ամփոփված են «Անի» գրքում՝ գրված ռուսերեն [8]:

Մառն անդրադառնում է իրենից առաջ Անիի մասին գրված թե՛ հայկական և թե՛ օտար աղբյուրներին՝ ոչինչ բաց չթողնելով, և Անին հետազոտած բոլոր անունների մեջ հատուկ ձևով առանձնացնում է Ղևոնդ Ալիշանին ու նրա «Շիրակ» աշխատությունը: Սա Ալիշանի

պատմաաշխարհագրական բնույթի կոթողային առաջին աշխատությունն էր, որ լույս տեսավ 1881-ին: Դրան հետևեցին «Միսունանը» (1885), «Այրարատը» (1890), «Միսականը» (1893): Ի տարբերություն Մառի՝ Ալիշանը չէր տեսել Անին, ինչպես նաև Մեծ Հայքն ու Կիլիկիան, սակայն հզոր ներհայեցողությամբ, աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությամբ Անիի անցյալը ներկայացնում է ճշգրտորեն: Մառը գրում է, որ Բրոսսեից հետո Անիի պատմական ինքնուրույն հետազոտություն չի ստեղծվել, կամ գրեթե այդ ուղղությամբ ոչինչ չի արվել:

Անիի հանրային ճանաչմանը մեծ խթան հանդիսացավ Վենետիկի Մխիթարյաններից Ալիշանի «Շիրակ» պատմաաշխարհագրական աշխատությունը: Գրքի մեկ երրորդը հատուկ Անիին է նվիրված [3 - 20]:

Մառն ասում է, թե «Շիրակ» երկասիրությունը գրված է տարագրված հայի կարոտով ու ռոմանտիզմով: Բոլոր դեպքերում օտարազգի հայագետը լայնորեն օգտագործել է Ալիշանի երկը՝ ընծայելով նրան գիտական վստահություն: Ըստ Ներսես Շնորհալու՝ «Անի» բառի երեք հնչյունները այլաբանորեն նշանակում են Աստծու Երրորդությունը.

Գեղեցկանունդ՝ զարմանալի,

Որ երբակի տառիս բերի.

Յերրորդութանըն խորհրդի,

Որ միշտ ի քեն երկըրպագի... [3-232]

Վարդան Արևելցին Անի բառը բացատրել է **խնամք** նշանակությամբ:

Հայտնի է, որ Անիի՝ այժմ պահպանված տաճարներից մեկը կառուցվել է հայագգի Տիգրան Հոնենցի ջանքերով, սակայն այդ մասին թուրքերը ոչ միայն լուրս են, այլև այն չեն համարում հայկական: Այսօր շատ տեղին է Մառի «Անի» աշխատության հետևյալ փաստը. «Հայկական վաճառականական աշխարհը (XIIIդ.) ուներ իր փայլուն ներկայացուցիչը հանձին Տիգրան իշխանի՝ Հոնենց տոհմից» [8-63]:

Մառը հետաքրքիր փաստեր է հաղորդում Հայաստանի XI դարի սպարապետ Վահրամ Պահլավունու մասին (ծ.թ.անհայտ- 1045, թաղված է Մարմաշենի վանքում). «Հարյուր հիսուն տարի Թամարա թագուհուց առաջ հայ զորահրամանատար Վահրամ Պահլավունու քաջագործությունների մասին վրացի զինվորները երգում էին երգեր՝ նրա քաջագործությունները ներկայացնելով որպես կիսաստծու» [8-63]:

Ալիշանի «Շիրակ» գրքում մեզ հետաքրքրողը բանաստեղծական այն հատվածներն են, որոնք մերթ որպես ողբ, մերթ որպես

հպարտություն գեղարվեստորեն ներկայացրել են Անիի փառքն ու կործանումը:

Ալիշանը և բոլոր Մխիթարյանները հպարտանում էին Խաչատուր Աբովյանի անձով ու ստեղծագործությամբ: Մեծ լուսավորչի «Վերք Հայաստանի» վեպում Անին ներկայացված է իր շքեղ ավերակներով: Աղասին, հափշտակված Անիի տաճարներով, առավել ցավ է ապրում Հայաստանի դժբախտ ներկայի համար ու երբ հեռանում է Անիից, ասում է իր չափածո ողբը, որից մի հատված մեջբերում է Ալիշանը «Շիրակ» գրքում.

Քանի շունչս վրբես ա, քանի ձեռքս գլուխս,
Կրակ էլ որ թափես, խորովես իմ սիրտս,
Էլի իմ հոգիս ուրախ քեզ կը տամ,
Թէ Անու միջում իմ մարմինս թողամ:
Աչքեր, քոռացե՛ք, բայքի թէ էլ բաց
Չտեսնիք դուք Անու լուսահողն օրինած՝
Բայքի թէ մեռնիմ էս դարդովն էրված՝
Հողս էլ ա հողին չմնայ կորած...
Էլի որ մարմինս մեկ քարի տակի
Ըլի քո ծոցումն՝ ինձ դրախտ պետքը չի...[3-104], [1-201-202]

Մեկ ուրիշ բանաստեղծական քերթված, որն օգտագործել է Ալիշանը, կոչվում է «Տաղ ի վերայ Անի քաղաքին, Պեյաթի գունով»: [3-105] Մա բայաթի է: Գրական այս տեսակը լայնորեն օգտագործել է Աբովյանը. «Բայաթիքը էն մտքով եմ գրել, որ չունքի մեջլսում, հացի վրա թուրքեվար են էսպես բաներ ասում. լավ հայը հայեվար ասի, որ քիչ-քիչ լեզուն քաղցրանա» [2-189]:

Ստեփանոս Մալխասյանը «Հայերեն բացատրական բառարանում» **բայաթի** բառը համարում է պարսկա-արաբական, որն արևելյան երաժշտության մի տխուր եղանակ է, բարձրաձայն ողբ՝ լացի ձայնով [7-323]: Իսկ բայաթին խիստ պատշաճում էր Անի քաղաքի ճակատագրին, որովհետև, ինչպես Ներսես Շնորհալին է գրում «Ողբ Եդեսիոյ» քերթվածում.

Բայց և զքեզ յայս հրաւիրեմ,
արևելեան քաղաքդ Անի,
Կցորդ լեր դու իմոյս ձայնի
և սփոփիչ տարակուսի...
Մուրն անողորմ անօրինի
որ մեր արեանս է ի սովի,

Որ չէ յագեալ և ոչ յագի
մինչև ի գալ կատարածի... [9-84, 88]

Ալիշանի տպագրած բայաթին ինչ-որ մի վարդապետի ողբ է, որը կամ տեսել է Անիի ավերակները, կա՛մ լսել է դրանց մասին և, անշուշտ, գրվել է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» քերթովածի ազդեցությամբ: Վարդապետի ողբի մեջ շեշտվում է՝ Անին եղել է «Պարտեզ ծաղկախիտ Շիրակայ դաշտին», իսկ հետո դարձել է «որջ աւագակաց» [3-105]:

Ալիշանը «Շիրակ» հետազոտության մեջ Անիի շքեղությունը և նրա ավերակների ցնցող տպավորությունները ներկայացնում է ըստ եվրոպացի ճանապարհորդներ Տավեռնիեի, Կեռ-Պոռթերի, Բորեի, Թեքսիեի, Բրոսսեի և ուրիշների: Ճանապարհորդներն այնքան են տպավորվում Անիի ավերակներով, որ նրանց վկայությունները վերածվում են յուրօրինակ խոհ ու արձակ բանաստեղծության: Բերենք դրանցից երեքը: Հեմիլտոնը Անիի ճարտարապետական արվեստի մասին գրում է, որ, քաղաքի ավագ դռնով ներս անցնելով, տեսել են քարե պարիսպներով բոլոր կողմերով տարածված քաղաքը, և թեև շենքերի ավերակները բազմաթիվ չէին, ինչպես կարծում էին, սակայն խիստ ազդեցիկ էին և քրիստոնյա քաղաքի գրեթե ահարկու տեսիլ էին: Քաղաքն ուներ շատ յուրօրինակ ճարտարապետություն, ինչպիսին անձանոթ է այժմյան Եվրոպային: Ավերակները գրեթե նույն վիճակում էին, ինչպես թողել էին դրանք ավերողները ութ դար առաջ [3-106]: Մեկ այլ անգլիացի՝ Ուիլբրեհեմը, 1837-ի նոյեմբերի 4-ին Անին նկարագրում է նույնքան տխրաշունչ պատկերներով՝ ասելով՝ թվում էր՝ երբեք ոչ ոք չէր մտնում Հայոց մայրաքաղաքի երբեմնի մարդախումոն փողոցները: Մի մենավոր հովիվ կանգնած էր կիսակործան շենքերի մոտ, մինչ լեռնային այծերի փոքրաթիվ հոտը մակաղում էր մոտակա բաղնիքների կործանված կամարների տակ: Հովիվն ու նրա հոտը շատ տեսանելի էին՝ շրջակա ամայի տեսարանի վրա և արժանի Սավադոր Ռոզայի վրձնին՝ որպես նկար: Տրսմաթախիժ խորհրդածություն էր առաջացնում Անիի ավերակների տեսքը: Այդ անապատ քաղաքը տեսնելիս խիստ մելամաղձիկ տպավորություններն ազդում էին մարդու սրտի վրա: Նրա լքված եկեղեցիները հիշեցնում էին, որ հզոր քրիստոնյա ազգ է կործանվել Ասիայի խուժաղուժ բարբարոսների հարվածներից և քրիստոնյա անագորույն թշնամիների հրահանգներով: Շենքերի կանգուն մնացորդները պատկերում էին միայնություն, և մարդկային աչքը փնտրում էր կենդանության նշույլ [3-106]:

Ազդեցիկ են նաև Անիի մասին ֆրանսիացի ճանապարհորդ Բորեի հուշերը: Նա գրում է, որ մեծ փափագով անցել է Անիի ավազ դռնով, որը տոնականորեն բացված էր խնդերես քաղաքացիների համար, սակայն աչքերի առջև բացվել է գերեզման հիշեցնող դատարկություն: Ե՛վ պարիսպների, և՛ քանդակների ու շենքերի արձանագրությունների վրա երևում էին պարսաքարերի հարվածների հետքեր: Ամեն ինչ այդ քաղաքում թվում էր որպես եզակի նորության ու թարմության երևույթ: Կարծես երեկ էին հարձակվել քաղաքի վրա, և հաղթողը տանում էր իր կողոպուտը: Աճած խոտը, արևից խանձված, ծածկում էր գետնի վրա փռված ավերակները: Հովիվը հսկում էր իր հոտին, և ինչ-որ կար քաղաքում, թվում էր անիծված: Արևմտյան կողմից արքունի ապարանքը՝ ծակոտված և ավերված, կռացած խոնարհվել էր Ծաղկաձորի վրա, որը չորացած էր և ամայի: Հարավային կողմից բարձրավանդակին, բարձրանում էր քայքայված պատերով միջնաբերդը, արևելյան կողմից լավում էր Ախուրյանի մոնյունը, և գետը իր քարքարոտ հատակով հնչեցնում էր բնության ողբը՝ համաշխարհային սգի մեջ: Միայնակ պանդուխտը, մեն-մենակ թափառելով ավերակների մեջ, քարերին հարցնում էր՝ իմանալու իր տեսած վայրերի և այն ազգի մասին, որ մի ժամանակ բնակվել էր այդտեղ: Նա ավերակներից ու մարդու՝ մարդ արարածի, եղբոր նկատմամբ ունեցած անխնա վերաբերմունքից վարակվում էր տխրությամբ, որովհետև մարդը մարդու հետ պետք է վարվի խաղաղությամբ ու մեղմությամբ [3-107-108]:

Ալիշանը հայտնում է, որ Անին ռուսական կայսրության մեջ մտնելուց հետո որոշ եկեղեցիներ նորոգվել են, միաբաններն են հաստատվել Աստծու տներում: Թիֆլիսաբնակ Հովհաննես Քյուրքչյանը երկար ամիսների ընթացքում նկարել է Անիի պարիսպները, շինություններն ու արձանագրությունները և ձեռնարկել է դրանց հրատարակությունը հատուկ ծանոթագրություններով: Նրա ուղեկիցն էլ՝ Հովակիմ Գեղամյանը, տեսնելով այդ ամենը, փոխել է Հուլիոս Կեսարի՝ Հռոմի սենատին ուղղված հայտնի զեկույցի բառերը՝ «Եկա, տեսա, հաղթեցի», իր համառոտ զեկույցով՝ «Եկի, տեսի և ողբացի» [3-109]:

Ալեքսանդր վարդապետը մի պարզ, սակայն սրտառույ ռոբ է գրել Անի քաղաքի մասին, որում հայ տղայի ուշադրությունը հրավիրում է Անիի տխուր ներկայի վրա՝ հույս ունենալով, որ հետագա սերունդներն Անին այդ վիճակից դուրս կբերեն.

Անի քաղաք նրստեր կու լայ
Չըկայ ըսող՝ Մի՛ լա, մի լա.

Կըսեն քիչ է, թող մընայ լայ:
Ա՛խ, ե՞րբ լըսեմ, Մի լա, մի լա.
Շատ ցաւերով կայրիմ տապին,
Չունիմ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խրդճալոյս գայ մոտենայ՝
Հիչ չէ՛ ըսէ. «Մի՛ լա, մի լա»: [3-109]

Այս պարզ տողերին Ալիշանն ավելացնում է ուրիշ մի հատված և չգիտէ, թե երբ են գրվել այդ տխուր տողերը: Որոշակիորեն պարզ է, որ Անիի պանդուխտները հայտնվել են Ռումինիայում ու կրել են անհնարին տառապանքներ՝ շարունակ հիշելով իրենց հայրենի ու սիրելի Անին.

Տիւ եւ գիշեր լամք եւ ողբամք մեք յատնի,
Մի՛նչ լըսողաց սիրտ եւ աղիսն խարշատի,
Զի զըրկեցաք յԱնի քաղքէն գովելի: [3-109]

Առանց Արիստակես Լաստիվերցու անունը տալու՝ Ղ. Ալիշանը նրա պատմությունից մեջբերում է Անի քաղաքի երբեմնի փառքի՝ արձակ բանաստեղծությամբ ստեղծված ներբողը գրաբարով: Այն Արիստակես Լաստիվերցու՝ Վազգեն Գևորգյանի թարգմանած «Պատմության» մեջ ունի հետևյալ բովանդակությունը. «Կար ժամանակ, որ այս երկիրը ճանապարհորդների դեմ բացվում էր իբրև տնկախիտ, կանաչազարդ, տերևալից, պտղաբեր, գեղաշուք ու երջանիկ մի դրախտ, քանզի իշխանները զվարթատես դեմքով բազմում էին գահին, իսկ նրանց առջև, գարնանաբեր երփնավառ ծաղկանոցների նման երգ ու ծնծղաների և այլ երգարվեստների ձայները մարդկանց սիրտն ու հոգին համակում էին ուրախությամբ ու բերկրանքով, այնտեղ նստում էին նաև ծերերը, պատվական ու փառահեղ ալիքներով զարդարված, իսկ մայրերը, մանուկներին գիրկն առած, մայրական գթով տոչորուն, անհուն բերկրանքից մոռանալով երկունքի ցավերի տխուր ժամանակը, աղավնիների նման իրենց նորափետուր ձագուկներով էին միշտ հրճվում» [4-33, 3-110]:

Աշխարհիկ կյանքի այս երազային պատկերին հետևում է հոգևոր իշխանության փառահեղ վիճակն ու շքեղ եկեղեցիների նկարագիրը:

Անիի նախկին պերճ ու շքեղ վիճակը և հետագա ավերված տեսքը ներկայացված է Ալիշանի վկայակոչված մեկ այլ քերթվածում, որը կոչվում է «Անդորրանք Անույ»:

Ղ. Ալիշանը Անիի առիթով խոսում է մի եկեղեցու մասին, որի ձեռնարկը պահում են չորս սյուներ՝ գեղեցիկ ու վայելչաշուք [3-111-112]:

Այլազգիներն ասում են, որ աջակողմյան մի սյունից օգոստոսի տասնհինգին կամ քսանին կարմիր շիթերով արտասուքի նման հեղուկ է հոսում, նույնիսկ տեսել են նույն տեղում կրակներ, որի պատճառով արածող անասուններն այդ ավերակ եկեղեցուն չեն մոտենում: Ալիշանը նաև վկայում է, որ Կարապետ անունով մի վարդապետ իր աչքով տեսել է սյունից հոսող կարմիր մածուցիկ նյութը, որը նաև շոշափել է ձեռքով: Ականատես վարդապետի կարծիքով սյան խոյակում կա թաքցրած ինչ-որ սրբի նշխար, և կարմիր նյութը հոսում է այնտեղից [3-112]:

«Անդորրանք Անույ» բավականին ծավալուն գործում անհայտ հեղինակը, որը, ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության», քաջատեղյակ է Հայաստանի պատմական անցյալին, Անիի ավերակ վիճակը ներկայացնում է հայերի դժվարագնա պատմության դրվագներով՝ սկսելով հրաշագործ նախահայր Հայկից.

Հրաշագործակ ճիգն Հայկին,
Հարըստութիւն եւ հանճար,
Միրտ խանդակաթ, ջերմ հոգին,
Հուսկ փառաբնակ իւր տաճար...[3-111]

Հիշատակվում են այն թշնամիները, որոնք հարձակվել են հայերի վրա՝ պարսիկները, սկյութները, սակայն կարծես խաչը հավետ հսկել է հայերին.

Եւ ուր յաւէտ հսկէ խաչ՝
Նա յաւիտեան անամաչ: [3-111]

Հայաստանը հարձակումների է ենթարկվել Բաբելոնի և Ասորեստանի կողմից.

Տեսի զԲանէլ եւ զԱսուր...[3-112]

Անգամ քրիստոնյա երկրները, ինչպիսին է Աթենքը, Հայաստանին ապավեն չեն եղել: Բախտը հայերի մայրաքաղաքը Դվինից տեղափոխել է հացառատ Շիրակ.

Մինչ թողեալ զբարձրըն Դրւին՝
Էջ բաղդ հացուտն ի Շիրակ...[3-112]

Հայաստանի մայրաքաղաքը դառնում է Անին, որը հռչակվում է ողջ աշխարհում.

Կանգներ յըղձիկն իւր յԱնի,
Առնել յաշխարհս անուանի:[3-112]

Անին ճոխանում է ն՛ իր շենքերով, ն՛ իր երջանիկ բնակիչներով:
Բայց թշնամին հարձակվում է վաղնջական Հայաստանի վրա, որը
դարձել էր «Շահաստանաց շահաստան».

Խուժե՛ յանկարժ թշնամի
Ի կողոպուտ եւ յաւեր.-
Եկեղեցիք հազար մի
Համահաւտան հրաւեր.
Ամեն բնակիչ՝ բերդապահ,
Ամեն բնակիչ՝ զինաւոր.
Ու Այծեամն աղեղ եւ վստահ
Արծաթաղեղն Նահիտ նոր,
Ի դաստակերտ բրգանէ
Եւ պաշտպանէ եւ վանե...[3-113]

Անին թշնամիներից պաշտպանողների մեջ էր գեղայա Այծեմնիկը,
որին Ալիշանն անվանում է «արիութեանց մայր» [3-110]:

Քերթվածի հեղինակը շեշտում է, թե Անին ուներ հազար տաճար և
բազում պալատներ: Նա Անին համարում է Թորգոմի եռանդուն թոռան
արարումը, որն ընկել է իր շքեղությունից, ու աչքերը լացից փառակալել
են, և նա դարձել է եղերամայր: Անիի վիշտը կիսում է քաղաքի կողքից
հոսող Ախուրյան գետը: Քերթվածն ավարտվում է լավատեսորեն:
Հայկաշունչ Անիի գմբեթները վերստին երկնային սլացք կստանան,
շուշանը նորից կծաղկի, ու հայր կողջունի նոր Անիին.

...Քաղաքամա՛յր գեղանի,
Թորգոմաթո՛նն եռանդուն,
Յառեա՛ր պնդեա՛ր գսիրտ քո վառ.
Դու՛ ստր Արամայ ծաղկաբուն,
Լացե՛ր...կա՛լ գաչքըդ փառփառ.
Եղերամայր մըշտամռունչ
Շատ մեզ լալօքն Ախուրեան:
Դի՛ք ձեռն ի լանջ հայկաշունչ...
Ահա գմբեթք վերյարեան.
Ահա շուշանըն կանգնի.
Ողջոյն տամ քեզ՝ Նոր Անի: [3-114]

Ընդունված է՝ ամեն երկրի մայրաքաղաք դառնում է
բանաստեղծների ոգևորության աղբյուր: Պատճառը հայրենասեր

բանաստեղծի պետականության փաստի գիտակցումն է, որն առավել երևում է երկրի մայրաքաղաքի շենության մեջ:

Այս առումով Անին հայ մատենագրության մեջ ամենագովերզված մայրաքաղաքն է՝ մինչև Երևանին ուղղված ներբողներն ու փառաբանական տաղերն ու բանաստեղծությունները: Անիի շենությունը նշանակում էր Բագրատունիների թագավորության ծաղկուն վիճակ: Անի քաղաքի բանաստեղծական առաջին նշանակալի գովքը մեզ պարզել է Ներսես Շնորհալին «Ողբ Եդեսիոյ» երկում: Անշուշտ, Շնորհալուն ծանոթ էր Արիստակես Լաստիվերցու «Պատմությունը», որում առկա է Անիին նվիրված արձակ ներբողը և այն փաստը, որ Անին եղել է տիեզերահռչակ քաղաք: Կարևորն այն է նաև, որ Լաստիվերցին Անիի փառքի և դրա անկման ականատեսն է: «Շիրակ» հատորում այդքան մեծ տեղ տալով Անի մայրաքաղաքի պատմությանը՝ Ալիշանը նպատակ ուներ հայրենասիրական լիցքերով տոգորել հայ ժողովրդի նոր սերնդին, որպեսզի նրանք մտածեին վերականգնել հայ պետականությունը և հետագա սերնդին պարզելին նորոգ Անին՝ որպես հայ ժողովրդի հարատևության երաշխիք: Այս առումով «Շիրակ» աշխատության մեջ Անիին վերաբերող պատվիրանները մշտապես արդիական են:

ПОЭТИЧЕСКИЙ ОБРАЗ СТОЛИЦЫ АРМЕНИИ АНИ В ПРОИЗВЕДЕНИИ «ШИРАК» Г. АЛИШАНА

Мардян Г. А.

Столица Ани династии Багратидов, без преувеличения, и в дни своего расцвета, и в развалинах была и остается предметом интереса цивилизованного мира. Начиная с Золотого века, средневековые армянские историки говорили об Ани. Это Егише, Лазарь Парпеци, Степанос Асогик, Аристакеc Ластиверци, Самвел Анеци, Матевос Урхаеци, Мхитар Айриванеци, Вардан Арелелци, Киракос Гандзакеци и другие. Аристакеc Ластиверци по праву называет Ани «городом всемирно известным». Уделяя такое большое место истории столицы Ани в книге «Ширак», Алишан имел целью патриотическими чувствами заполнить сердца новых поколений армянского народа, чтобы они задумались о восстановлении армянской государственности и о том, чтобы передать грядущим поколениям обновленный Ани как залог гордости армянского

народа. В этом смысле заповеди об Ани в произведении «Ширак» всегда актуальны.

Ключевые слова: Гевонг Алишан, «Ширак», Ани, Багратиды, столица, плач, художественный, путешественник, развалины, новый Ани.

THE POETIC IMAGE OF THE CAPITAL OF ARMENIA ANI IN THE WORK SHIRAK BY G. ALISHAN

Mardian G. A.

The capital Ani of the Bagratid dynasty, without exaggeration, in the days of its flourishing and even by its ruins was and remains a subject of interest for the civilized humanity. Beginning from the Golden age, Armenian medieval historians spoke of Ani. These are Yeghishe, Lazar Parpetsi, Stepanos Asoghik, Aristakes Lastivertsi, Samvel Anetsi, Matevos Urhaetsi, Mkhitar Airivanetsi, Vardan Areveltsi, Kirakos Gandzaketsi and others. Aristakes Lastivertsi rightfully calls Ani “a worldly famous city”. Giving such a great place to the history of the capital Ani in his book *Shirak*, Alishan had the goal of filling the hearts of new generations of the Armenian people with patriotic feelings, so that they would think about restoring Armenian statehood and about passing the renewed Ani to future generations as a guarantee of pride of the Armenian people. In this sense, the commandments about Ani in the work *Shirak* are always relevant.

Keywords: Ghevond Alishan, *Shirak*, Ani, Bagratids, capital, lamentation, artistic, traveler, ruins, new Ani.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արուսյան Խ. Ընտիր երկեր: Հ. I: Երևան: պետական հրատարակչություն: 1939: 344 էջ:
2. Արուսյան Խ. ԵԼԺ ութ հատորով: Հ. II: Երևան: ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն: 1948: 372 էջ:
3. Ալիշան Դ. Շիրակ: Վենետիկ: Ս. Ղազար: 1881: 214 էջ:
4. Արիստակես Լաստիվերցի Պատմություն, թարգմանությունը Վ. Ա. Գևորգյանի: Երևան: «Հայաստան» հրատարակչություն: 1971: 185 էջ:

5. Brosset M. F. Les ruines d'Ani, capitale de l'Arménie sous les rois Bagratides aux X^e et XI^{es}, I-^{er} partie. SPb 1860. II^e partie, SPb 1861. 122, 92 p.
6. Ker Porter R. Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia during the years 1817, 1819 and 1820. Vol. I. London. 1821. 886 p.
7. Մալխասյանց Ստ. Հայերէն բացատրական բառարան: Հ. I: Երևան: ԵՊՀ հրատակչություն: 2010: 608 էջ:
8. Март. Н. Я. Ани. Ереван. Армгиз. 1939. 258 с.
9. Ներսէս Շնորհալի Երզեր: Եդեսիայի ողբը: Երևան: «Սովետական գրող» հրատարակչություն: 1982: 214 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարդյան Գ. Ա. – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հայկական պետական մանկավարժական համալսարան
Էլ. փոստ՝ gayane-mardyan@rambler.ru

Տրվել է խմբագրություն 03.10.2019